կան տեսակէտից իր գոյութիւնն արդարացնելու համար: Ուրիշ ազգերի կեանքի մէջ մտել է նա միշտ արեան ու արցունքի հեղեղներ թափելով: Նա հաստատուել է աշխարհում միմիայն պատերազմներով եւ շղթաներով — շղթաներ այլ ազգերի եւ կրօնի համար. շղթաներ իր սեփական զաւակների մտքի եւ ազատութեան համար. շղթաներ վերջապէս մուսուլման կնոջ համար: Թիւրքը ապրել է միմիայն ճորտութիւնով: Եւ հին քաղաքակրթութեան ցեղերի վրայ իր իշխանութիւնը հաստատելով — ինչպէս յոյների, արաբների, հայերի վրայ — միաժամանակ կենսական ու ժպտուն ոյժերով հարուստ սլաւոնների տէր դառնալով, իշխելով աստուածային քաղաքին, որ նախասահմանուած էր աշխարհի կեդրոնը լինել, Թիւրք ժողովուրդը քարացել է մի նուիրապետական դիրքի մէջ: Միւսուլմանական սխոլաստիկայով խեղդուած՝ նա չի կարողացել մարդկային մտքի որեւէ ասպարէզում ցոլացնել ստեղծագործ հանճարի կայծերը: Փոխ առնելով իր կրօնը արաբ ազգից, որի ոգին նրան խսպառ օտար է, նա չի կարողացել ազգային եկեղեցի ստեղծել»:

«Թիւրք խղճուկ լեզուն անզօր է ծառայել գիտական մտածումին եւ արաբական գպրութեան ծովից է քաղում իր տեսական զաղափարների ամբողջութիւնը: Թող նա պճնուի արաբական մտքի փառահեղ զգեստներով, թող նա զարդարուի պարսկական բանաստեղծական դանձերից խլուած թանկագին քարերով, Թիւրք ժողովուրդը չի ծնել ոչ մի նոր մեծ զաղափար: Աշխարհը երբեք չի լսել Թիւրքի շրթունքներից մի նոր մեղեդի կամ երգ. Թիւրքը երբեք չի հարստացրել միտքը նոր ձեւերով ու պատկերներով: Թիւրք ժողովուրդը չի թողել յետնորդներին եւ ոչ մի բանաստեղծի, արուեստագէտի, քանդակագործի, երաժշտի, գիտունի մի մեծ անուն, որ մարդկութիւնը կարողանար այն կրկնել ուրախութեամբ եւ սիրով: Թիւրքը չի գրել ոչ մի նուէր գեղեցկի, ճշմարտի եւ բարիի սեղանի վրայ: Նա եղել է մի ամուլ ազգ, առանց պտղի ազգ:

«Իր (Թիւրքի) պատմական առաքելութիւնն է եղած աւերել. իսկ աւերածը հոգու պէտք չունի: Հոգին սակայն, անհրաժեշտ է ազգային կեանքի հիմքերը ձգելու. եւ հէնց այս հոգին է, որ ցարդ միշտ էլ պակասեց Թիւրքիային. Երիտ. Թիւրքերը որոշ մօմենտում փորձեցին նրան տալ այդ հոգին. բայց աւա՜ղ, շատ շուտով պարզուեց, որ իրենք իսկ զուրկ են հոգուց»1):

Այս ժողովուրդը «հոգի չունի», նա «ամուլ ժողովուրդ է»:

Զարհուրելի է այս դատաստանը:

Զարհուրելի է եւ արդար:

Մանդելշտամ մինակ չէ. բազմաթիւ են եւ մեծահատոր գրքերի մէջ ամփոփուած ամենավհատեցուցիչ կարծիքներ Թիւրք ցեղի համար շատ հեղինակաւոր անձանց. Գլադստոնից սկսած մինչեւ Լորդ Զէմս-Բրայս ու նախագահ Վիլսոն. Զէմս Զիրարդից մինչեւ Մորդընթաու, մինչեւ դոկտոր Լեպսիուս, եթէ յիշատակենք միայն խոշորները:

Դեռ քանի՜ քանի՜ ուրիշները կան:

Ես մէջ բերեցի Մանդելշտամի կարծիքը որպէս ամենէն բնորոշը, եւ ամենէն իրազեկը, որ գրուած է մի տեսակ մարգարէական՝ ասեմ, թէ մարդկային տրամութեամբ: Կարդալով իր տողերը, զգում ես, որ հեղինակը Թիւրքի թշնամի չէ, բայց մարդկութեան բարեկամ է: Եւ այնպէս կ'ուզէր, որ Թիւրքն այնպէս չլինէր, ինչպէս որ է:

Նա ասես արցունք է թափում Թիւրքի «աւերիչ ու ողբերգական ճակատագրի» վրայ. Թիւրքի աւերածն ասես մի դաժան ու նզովուած ֆատումի գործ է, որից չի կարողանում ազատուել թշուառական ցեղը: Զգում ես, որ Մանդելշտամ փնտռում է Թիւրք ժողովրդի հոգին, որի վրայ կ'ուզէր կռանալ «խնդութեամբ ու սիրով», ինչպէս ինքն է ասում: Փնտռում է, չի գտնում եւ իր հոգին է համակուած անհուն վշտով Թիւրքի համար, մարդկութեան համար:

Իր մեղքը չէ, որ այնուամենայնիւ իր տրտում տողերը ահաւոր դատավճիռ են մի անպիտան ցեղի եւ իր խօսքը վերջին դատաստանի շեշտն ունի,— "Delondum est imperium

1) Ա. Մանդելշտամ Le sort de l'Empire Ottoman, երես 580–581, 1917 թիւ: